Մրցույթ՝ ՀՀ Կոտայքի մարզի «Աբովյանի Արթուր Վանոյանի անվան թիվ 6 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի դասվար (3 մասնագետ), հայոց լեզու և գրականություն (21 դասաժամ) ,ռուսաց լեզու (18 դասաժամ), հասարակագիտություն (15 դասաժամ), ՀԵՊ (6 դասաժամ), մաթեմատիկայի, հանրահաշիվ և երկրաչափության (23 դասաժամ), քիմիա (6 դասաժամ), կերպարվեստ (4 դասաժամ), տեխնոլոգիա (4 դասաժամ), երաժշտություն (9 դասաժամ), ֆիզկուլտուրա (11 դասաժամ) ուսուցչի թափուր տեղերի համար

Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման և հարցազրույցի: Թեստավորման փուլն անցկացվում է՝ ըստ ՀՀ ԿԳՄՍՆ մշակած հարցաշարի: Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը և յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում առանձին:

Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝
- դիմում (ձև 1),
- 1 լուսանկար 3x4 չափի,
- բարձրագույն կրթությունը հաստատող փաստաթուղթ (դիպլոմ),
- անձը հաստատող փաստաթուղթ,
- «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան՝ աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից և աշխատանքային գրքույկի պատճենը (առկայության դեպքում),
- ինքնակենսագրություն (ձև 5),
- այլ պետությունների քաղաքացիները՝ ՀՀ-ում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ,
- ՀՀ արական սեռի քաղաքացիները՝ նաև զինվորական գրքույկ,
- հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (առկայության դեպքում),
- որակավորման տարակարգ ունենալու դեպքում՝ հավաստող փաստաթուղթ:
Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ և բնօրինակները վերադարձնում: Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ կամ առկա են թերություններ, մասնակիցը կարող է մինչև փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել և համալրել դրանք:

Փաստաթղթերն ընդունվում են **նոյեմբերի 14-ից մինչև նոյեմբերի 27-ը** ներառյալ, ամեն օր՝ ժամը 10:00-ից 15:00-ը, բացի շաբաթ, կիրակի և այլ ոչ աշխատանքային օրերից:

Մրցույթը տեղի կունենա **2023թ. դեկտեմբերի 4-ին՝ ժամը 14:00-ին**, **Աբովյանի Արթուր Վանոյանի անվան թիվ 6 հիմնական դպրոցում**, հասցե՝ ք.Աբովյան, Սարալանջի 1: Տեղեկությունների համար զանգահարել 093-69-50-93 հեռախոսահամարով: Էլ.հասցե՝ **abovyan6@schools.am**